

ՀԵՔՈՒՄ Ա.Ի ՀԵՔՈՒՄ - ԶԱՎԷԼ ԵՆ ԵՐԿԼԵԳՈՒԵԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂԵՍՆ

Հեթում Ա.ի (1226-1270 թթ.) դահակալութեամբ՝ Կիլիկիոյ մէջ սկսաւ նոր հարստութիւն մը, որ տեւեց 115 տարիներ :

Հեթումի 45 տարիներու երկարատեւ իշխանութիւնը Հայկական Կիլիկիոյ պատմութեան համար եղաւ բացառիկ նշանակութեամբ շրջան մը : Կիլիկեան Պետութիւնը՝ զիւնաազիտական ու տնտեսական մարդերու մէջ ձեռնարկեց քաղաքական միջազգային տարողութիւն ունեցող ծրագրերնրու հետապնդման :

Հեթում Ա. օժտուած էր բացառիկ տաղանդով ու կը վստեղէր աջակցութիւնը նոյնքան օժտուած եւ կարող օգնականներու : Իր հայրը՝ Կոստանդին Պայլ, երկար տարիներ պահեց իր խնամակալի եւ խորհրդատուի պաշտօնը, միշտ մնալով մղիչ ոյժը ազգային կուսակցութեան : Երէց եղբայրը՝ Սմբատ, որ սպարապետն էր Կիլիկեան բանակներուն, հաւասար ճարտարութեամբ վործածեց սուրն ու դրիչը, դառնալով կոթողական զէմք մը ԺԳ. դարու Կիլիկիոյ պատմութեան մէջ :

Հեթում Կիլիկիոյ դահը բարձրացաւ պատմական շիտթ պայմաններու մէջ : Թուենք զլիսաւորները .

Ա. — Ան կը բազմէր գահի մը վրայ, որ թափուր կը մնար : Անտիոքի Պոհեմոնտ իշխանի որդին՝ Ֆիլիք, որ ամուսնանալով Լեոն Ա.ի աղջկան՝ Զապէլի, դրաւ իր գահը, կողոպտած ըլլալով արքունի դանձերը՝ արժանացաւ դաւաճաններու պատիժին ու սպաննուեցաւ բանտին մէջ : Հետեւաբար՝ Անտիոքի իշխանութիւնը յարմար առիթի կը սպասէր վրէժ լուծելու համար Կիլիկիայէն : Աւելցնենք որ այս ամուսնութիւնը անըմբռնելի կը թուէ, որովհետեւ Ֆիլիքի հայրը՝ Պոհեմոնտ, նոյն այն իշխանն էր, որ 1203-1216 թթ. երկարատեւ

սրատերադժի մէջ էր Լեւոն Ա.ի հետ, մերժելով Ռուբէն-Ռէյմոնտի զահակալական իրաւունքները Անտիոքի վրայ:

Բ. — Սելճուքները զօրաւոր պետութիւն մը ստեղծած էին եւ կը սպառնային Կիլիկիոյ, անոր խորտակումը ծրագրելով:

Գ. — Չորրորդ Սաչակրութիւնը 1204 թ.ին շեղած էր իր նպատակէն, ու փոխանակ Նրուսաղէմը ազատազրելու, բաւականացած էր զբաւելով Պոլիսն ու կողոստելով անոր հարստութիւնները:

Կիլիկիան մեկուսացած էր, եւ երկրին պաշտպանութեան համար անհրաժեշտ էր ստեղծել զօրաւոր բանակ մը, որուն ծախքերը առաւելաբար պիտի հոգացուէին վաճառականութեան զարգացումով դոյացած եկամուտներով, որոնք պետութեան ղլխաւոր ազրբւրներն էին: Հեռատես եւ զիւանազէտ Հեթում ձեռք առաւ միջոցներ, որոնց կիրարկումը կը զաննէր իր կողմէ հատանուած արծաթ դրամներու ուսումնասիրութեամբ:

Հեթում Ա. իր՝ մօտ կէս դար տեւող զահակալութեան ընթացքին, հատանած է միայն երկու դրոշմներով արծաթ դրամներ, որոնցմէ առաջինը՝ Հեթում-ՉԱՊԷԼ կոչուած արծաթներն են, իսկ երկրորդը՝ հետաքրքրական այն արծաթները, որոնք ծանօթ են ՆՐԿ-ԼեՉՈՒՆԱՆ անունով:



Նկար քիւ 1

Հեթում-ՉԱՊԷԼ: Այս դրամները հատանուած են յամառ յարատեւողութեամբ եւ հետեւողութեամբ մինչեւ Հեթումի մահը՝ 1270 թ.: Իրոջը կը ներկայացնէ Հեթում եւ Չապէլ միասին ղլմահայեաց, եւ երկուքին միջեւ խաչ մը: Շուրջը գրուած է՝ ԿԱՐՈՂՈՒԹԻԻՆ ԱՅ (Աստուծոյ) է, (տարբերակներով): Յետասկողմը՝ առիւծ մը դէպի աջ, բռնած խաչ մը: Շուրջը՝ Հեթում-ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ (տարբերակներով), առանց Չապէլ թաղուհիի անուան յիշատակութեան (տես՝ նկար թիւ 1):

Այս սրահարանողական երեւոյթը մեզ կը մղէ պրպտելու անոր գրդապատճառները եւ ընելու կարգ մը խորհրդածութիւններ :

1. — Անպայմանօրէն Հեթում եւ իր փողերանոցի պատասխանատուները զուրկ չէին երեւակայութենէ կամ նորարարութեան բնական եւ մարդկային ձգտումներէ : Զապէլ թագուհիի մահէն (1252 թ.) ետք, կ'ակնկալուէր որ փոխուէր դրոշմը, եւ Հեթում այլ դրոշմ մը դնէր դրամներուն վրայ : Սակայն դրոշմի շարունակումը կը թուի թէ ունեցած է անհրաժեշտ եւ հրամայական պահանջներ :

2. — Այս դրամին վրայ Զապէլի պատկերը ընդհանրապէս հայ դրամագէտներու կողմէ նկատուած է որպէս թագաւորական դահի ժառանգական իրաւունքի նուիրազորման արտայայտութիւն : Հայր Սիպիլեան կը խորհի թէ՛ «Հեթում Ա. ի դրամները միշտ Զապէլ թագուհուն հետ կը ներկայանայ, ի հարկէ անոր համար՝ որ Զապէլ բնական ժառանգ ըլլալով՝ կարելի է իրաւունք մը կամ պատիւ մը սեպուած ըլլայ անոր պատկերը դրամոց վրայ դրոշմել»¹ :

Դոկա. Զարեհ Պտուկեան իր արդիական դասաւորումով հատորին մէջ կը գրէ. «Թագաւորը եւ թագուհին բացայայտօրէն ընդունած են այն իրողութիւնը, թէ թագուհին թագաւորական սերունդէ էր, իսկ Հեթում իր կողակիցը (consort)², հետեւաբար՝ Հեթումը կը ձգէ երկրորդական դժի վրայ :

Զապէլի ժառանգական իրաւունքը շեշտած են այս կամ այն ձեւով՝ Սմբատ Սպարապետ իր «Տարեգիրք»ին մէջ, Հայր Ալիշան՝ իր «Միտուան»ով, Օրմանեան Պատրիարք՝ իր «Ազգապատում»ին մէջ եւ ուրիշներ : Բայց դրամագիտական դժով հարցը կը մնայ անորոշ եւ ոչ համոզիչ :

Եթէ Զապէլ պահաժառանգ էր օրինական իրաւասութիւններով, պիտի ակնկալուէր որ դրամներուն վրայ արձանագրուէր նաեւ իր անունը որպէս թագուհի, փոխանակ իր կողակիցին՝ Հեթումի անունն առանձին յիշատակութեան :

Ըստ Սմբատ Սպարապետի ժամանակագրութեան՝ «Ի թուին ՈԿԵ (1216) ... Զայտու ժամանակաւ եղեւ թագաւորին Լեւոնի դուստր եւ անուանեաց զանուն նորա Զապէլ. եւ յայնմհետէ խորհէր զդուստրն իւր առնել ժառանգ թագաւորութեան իւրոյ, զոր եւ իշխանքն

1. Հ. Կոնստանտինով, Միպիլեան, Դասաւորութիւն Ռուբենեան Դրամոց, Վիեննա, 1892, էջ 25 :

2. Paul Z. Bedoukian, **Coinage of Cilician Armenia**, New York, 1962, p. 82.

իւր նոյնպէս տային նմա խորհուրդ, թէ յորժամ ետ տէր Աստուած զաւակ յերանայ քոց, արա դնա տէր ժառանգութեան քո եւ լոյժ զերդումն մեր զոր արարեալ եմք Ընտրելինի եւ կապեա ընդ դստեր քո, եւ մեք ծառայեմք նմա սրպէս արու զաւակի... Եւ թաղաւորն հաւանեցաւ ի րանս իշխանայ իւրոյ»³:

Ապա՝ Սմբատ Սպարապետ կը շեշտէ Զապէլի ժառանգութիւնը. «Եւ... Ոկլ (1219) պատահեաց տխտ հիւանդութեան թաղաւորին Լեւոնի, ուստի եւ մեռան իսկ: Եւ մինչդեռ կենդանի էր... խրատէր [իշխանները]... անարատ հաւատ պահել տղայ դստերն իւրոյ Զապէլի, զոր թողոյր ժառանգ տէրութեան իւրոյ»...⁴:

Օրմանեան Պատրիարքի համաձայն, «Ապագային ապահովութեան համար ալ սաստիկ երդումներով ջանաց պարտաւորել իշխանները ու զօրավարները, եւ նոյնիսկ զինուորներու գունդերը, թէ պիտի յարդեն իւր կամքը եւ պիտի հնազանդին իրեն աղջկան ու անոր խնամակալներուն: ... Եւ վախճանեցաւ [Լեւոն] 1219 Մայիս 2-ին, Հինգշաբթի օր...»⁵:

Զապէլ իշխանուհին, որ ծնած է 1216 թ.ին⁶, հօրը մահուան տարին ըլլալու էր մօտ 3 տարեկան: Հայրը՝ Լեւոն Ա., կ'աշխատէր ամէն գնով զայն պարտադրել աւազանիին եւ բանակին, լուծելով իրենց երդումը, եւ սաստիկ երդումներով պարտաւորել բոլորը որ պիտի յարդեն եւ հնազանդին իր աղջկան: Կար անշուշտ գլխաւոր պատճառ մը՝ իրաւական ուրիշ ժառանգորդ մը, յանձինս Լեւոն թաղաւորին Ռուբէն եղբոր թոռան՝ Ռուբէն-Ռէյժմոնտի, որ իրբեւ արու զաւակ, աւանդական եւ իրաւական զծով, անպայմանօրէն աւելի զօրաւոր պատճառներ ունէր զահին տիրանալու, քանի որ ան Կիլիկիոյ թաղաւոր օծուած էր Լեւոն Ա.ի թելադրութեամբ եւ փափաքով:

Ըստ Սմբատ Սպարապետի, «Իսկ ի ժամանակի յայնմեկ (1209 թ.) թաղաւորն Լեւոն թելադրութեամբ մօր իւրոյ Ընտրելին, եցոյ ամենայն հնազանդելոց իւրոց, մեծամեծաց եւ փոքունց, յայտնի ժա-

3. Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վեներիկ - Ս. Ղազար, 1956, էջ 219-220:

4. Նոյնը, էջ 222:

5. Մաղափա Արք. Օրմանեան, Ազգապատում, Ա. հար., Կոստանդնուպոլիս, 1912, սիւնակ 1592-1593, § 1096:

6. Սմբատ Սպարապետ, էջ 219-220: Օրմանեանի համաձայն Զապէլ ծնած է 1215 թ.ին (տես՝ Ազգապատում, Ա. հար. սիւնակ 1584, § 1088): Հ. Ղ. Ալիշան «1215 կամ 1216» կը նշէ Ռիքայի ծննդեան քուականը (տես՝ Միտուան, Վեներիկ, Ս. Ղազար, 1885, էջ 512):

ունդ թաղաւորութեան իւրոյ զՌոմիլէն զորդի դստեր եղբօրն իւրոյ Ըռովրինի, վասնզի ի ծերութեան եհաս, եւ էր անձամբ տկար վասն ցաւոյն զոր ունէր ի ձեռան եւ յտան, որ կոչէր թաղաւորացաւ, եւ ոչ զոյր նորա զաւակ յերանայ իւրոյ արու. վասն որոյ ՄԻԱՆԳԱՄ ԵՒ ԵՐԿԻՅՍ ԵՒ ԵՐԻՅՍ (ընդդժումը մեր կողմէ, Պ. Ս.), յայլ ժամանակս երդմնեցոյց տղային Ըռովրինի զամենեսեան զի նմա ծառայեսցեն յետ մահուան իւրոյ»⁷:

Օրմանեան կը գրէ. Լեւոն «... կը ջանայ Անտիոքի խնդիրը վերջացնել՝ որ իր եղբօր թոռ Ռուբէնը, զոր իրեն սրղեղրած էր, Անտիոքի իշխանութեան անցընէ, միանգամայն իրեն ժառանգ հռչակէ, եւ այսպէս Կիլիկիայով եւ Անտիոքով մեծ Հայ իշխանութիւն մը կազմէ, եւ այսպէս զօրացած՝ Հայաստանն ալ իւր իշխանութեան ներքեւ տոնէ: ... եւ Ռուբէնը պաշտօնապէս թագաժառանգ հռչակեց, 1209-ին, երբ տակաւին 12 տարեկան էր...»: Լեւոն «... Հեղի Լամբրոնայի յանձնարարած էր Ոթոն Դ. կայսեր ներկայանալ, ... Ռուբէնի համար թաղաւորական թագ խնդրել իրր թագաժառանգի, ինչ որ շնորհուեցաւ, եւ 1211 Օգոստոս 15-ին, Վերափոխման երկրորդ օրը, թագի հանդիսութիւն ալ կատարուեցաւ»⁸:

Վիլլընարանտի ժամանակագրութեան համաձայն, Ռուբէն թագաւոր օծուած է 1212 թ.ին⁹: Դարձեալ Սմբատ Սպարապետ կը հազորդէ որ «եւ յորժամ էր թուական ՈԾԹ (1210) առաքեաց թագաւորն Լեւոն զՀեթում, որ տէր էր Լամբրոնին, եւ անուանուեցաւ Հեղի... առ Պսպն Հոռմայ եւ առ կայսրն Ալամանաց եւ խնդրէր թագ սրղեղեցելոյն իւրոյ Ըռովրինի. որ եւ զարձաւ պատուով եւ երեր զթագն»¹⁰:

Յստակ է ուրեմն որ Կիլիկիոյ զահը ունէր իր իրաւական ժառանգը՝ արու դժով, եւ վերջինը՝ Ռուբինեան տոհմէն, որ պաշտօնապէս թագ ստացած էր Գերմանիոյ եւ Հունգարիոյ թագաւորներէն, հաւանութիւն՝ Հոռմի Պսպէն, եւ եկեղեցական օծում ստացած էր 1211 թ.ի Օգոստոս 15-ին: Օրինական ի՞նչ պայմաններ կային, որոնք կրնային արդարացնել իշխաններու անպատասխանատու վերաբերումը՝ լուծելու համար իրենց հաւատարմութեան երդումը, «կարողութեամբն Աստուծոյ» թագաւոր օծուած Ռուբէնի հանդէպ: Ոչ մէկ, բացի Լեւոնի պարտադրած կարգադրութենէն:

7. Սմբատ Սպարապետ, էջ 216:

8. Մ. Օրմանեան, Աղապատում, Ա. հտր., սիւնակ 1582-1583, § 1088:

9. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 476:

10. Սմբատ Սպարապետ, էջ 217:

Ըստ մեր մատենագիրներուն, 1216 թ-ին Ռուբէն հեռացած էր Անտիօքէն ու ապաստանած Սիս՝ Լեւոն Ա-ի մօտ, որ զինք որդեգրած էր: Անոնք կը յիշեն սահայն, թէ փոխադարձ յարաբերութիւնները ձգտուած էին: Ինչո՞ւ. բացատրուած չէ: Հայ պատմաբանները իրարմէ ընդօրինակելով, տարբեր դարձուածքներով կրկնած են Սմբատ Սպարապետի հաղորդածը, որ այս պատմական իրադարձութիւններուն հանդէպ որոշ զիբքորոշում ունի, ըմբռնելի պատճառներով, և կը մեղանչէ միակողմանիութեամբ:

Սմբատ Սպարապետ Ռուբէն-Ռէյմոնտը կը ներկայացնէ ապերախտ և ասպտամբ, արդարացնելու համար իր հօր՝ Կոստանդին Պայլի կողմէ անոր ձեբբակալումը և բանտին մէջ սպանութիւնը, ճամբայ հարթելու համար Հեթումի ամուսնութեան և դահակալութեան:

Կը թուի թէ Կիլիկիոյ ժողովուրդը՝ կրաւորական անտարբերութեամբ, առանց վրդովումի կամ բողոքի կը հետեւէր այս իրադարձութիւններուն: Ան չունէր գիտակցութիւնը որ աւանդականօրէն նուիրադորձուած իրաւասութիւններ կը խախտէին:

Նոյնը պիտի չըլլար պարագան երբ նոյն ժողովուրդը գիտակից իր դարաւոր աւանդութիւններուն և սրբութիւններուն, մահուան գնով, պիտի բռնկէր և պոթիկար օր մը, երբ թագաւորներ պիտի յանդիմնէին անոր ծէսն ու եկեղեցին վաճառքի ու սակարկութեան նիւթ դարձնել:

Պատմական այս պարագաները յարմար նկատեցինք վերյիշել, շեշտելու համար որ Հեթում՝ օրինականացնելու համար իր թագը, պէտք չունէր անհրաժեշտօրէն Զապէլ թագուհիին հետ միասնարար ներկայանալու իր դրամներուն վրայ: Մանաւանդ, ինչպէս ըսինք վերը, Զապէլի անունը կը բացակայ այս դրամներուն վրայէն, իսկ անոնց հատանումը շարունակուեցաւ հետեւողական կերպով մինչեւ Հեթումի մահը՝ 1270 թ., երբ Զապէլ մահացած էր արդէն 1250 թ-ին:

Թէ ինչո՞ւ Հեթում-Զապէլ դրոշմով դրամներու հատանումը շարունակուեցաւ նոյնիսկ Զապէլի մահէն ետք, Հայր Սիպիլեան կ'ենթադրէ թէ, «...Արդ չի կրնար ենթադրուիլ թէ սա Հեթմոյ և Զապէլի դրամները մինչեւ Զապէլի մահուան ժամանակը դրոշմուած ըլլան, ինչու որ վերջին ժամանակները աւելի հարկաւորութիւն կար դրամ կոխելու թաթարաց հարկապահանջութեանցը պատճառաւ»¹¹:

Յաջորդ էջին մէջ, Սիպիլեան կը խորհի թէ Զապէլի մահէն ետք, այս դրամները շարունակուած են հատանուիլ բայց «հապճե-

11. Հ. Կ. Սիպիլեան Դատարարութիւն....., էջ 25:

պով... առանց բնաւ դրոշմի ու արուեստին մտադրութիւն ընելու : Բարբարոս Թաթարաց , բարբարոս դրամներ վճարելու դժուարութիւն չկար»¹² :

Ս. Բոննպղևանի համաձայն՝ Սմբատ Սպարապետ Կարակորում՝ Գոյուկ Սանի մօտ հասնելէ ետք , «... համաձայնացրեց Հայոց թագաւորի այցելութեան պայմանները եւ հաւաստիացրեց Սանին , որ Կիլիկեան հայկական թագաւորութիւնը կը մնայ մոնղոլները կրտսեր դաշնակիցը եւ կը վճարի պահանջուած հարկը»¹³ :

Մեր յօդուածին սահմաններէն դուրս է Կիլիկիոյ թագաւորութեան հարկային պարտաւորութիւններուն ուսումնասիրութիւնը : Բայց եթէ իրապէս բարբարոս ժողովուրդի մը վճարուած հարկերուն դրամը որպէս դրոշմ ու արուեստ կարեւոր հարցեր չէին , ուրեմն անհրաժեշտ չէր , միեւնոյն եւ անտիտիտիս դրոշմով դրամներուն հատանումը : Հեապայտին , Հեթումի որդին՝ Լեւոն Բ. եւ յաջորդները հարկեր վճարեցին նաեւ մեմլուքներուն , որոնք դանձուած դրամները ձուլեցին , կամ արաբական կրկնադրոշմ մակադրութիւններով (overstrike) չըջանառութեան մէջ դրին իրենց շուկաներուն մէջ :

Հետեւաբար կար անհրաժեշտութիւն մը , կամ՝ գիւանադիտական ու տնտեսական մտասեւեռում մը , որ կը ստիպէր Հեթումի պէս հեռատես եւ արթնամիտ վեհապետ մը միեւնոյն դրոշմը անփոփոխ պահելու՝ չորջ կէս դար շարունակ :

Հիմնաւորելու համար մեր վարկածը , պիտի ստիպուինք պահ մը անդրադառնալ Կիլիկիան չըջապատող երկիրներու վաճառականական եւ դրամագիրտական պայմաններուն :

Փոքր Ասիան ընդարձակ եւ շահաւէտ շուկայ էր , եւ հանդրուան՝ Արեւելքէն Արեւմուտք փոխանցուող կարուաններուն : Շատ կարեւոր եւ սպառող շուկայ էր նաեւ Միջին Արեւելքը : Դարերու ընթացքին զարգացած էին վաճառականական ուղիներ , որոնց գծով Հնդկաստանի , Չինաստանի , Պարսկաստանի եւ այլ երկիրներու ապրանքները կը փոխադրուէին Փոքր Ասիա , եւ ապա՝ զանազան նաւահանգիստներ , ծովու ճամբով փոխադրուելու համար Եւրոպա : Կիլիկիա մէկն էր այդ կեդրոններէն , իր Այաս նաւահանգիստով , ուր ապրանքները կը դիպուէին ուղղուելու համար զանազան շուկաներ : Այս տարանցիկ առեւտուրի զարգացման կարեւորութիւնը զգաց Լեւոն Ա. , եւ 1201 թ. -էն սկսեալ , վաճառականական պայմանադրեր կնքեց իտալական

12. Նոյնը , էջ 26 :

13. Տես՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն , Գ. հտր. , (Հայկական ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն) , Երեւան , 1976 , էջ 701 :

քաղաքներու հետ : Մասնաւոր հոգ տարուեցաւ , որպէսզի ծովային եւ ցամաքային ճամբաները ապահով ըլլան :

«Կիլիկեան պետութիւնը հոգ էր տանում , որպէսզի ապահով լինէին ցամաքային եւ ծովային ճանապարհները , մասնաւորապէս հոգում էր Այսոս եւ Կոռիկոս այցելող օտարերկրեայ նաւերի եւ քարաւանների անվտանգութեան ու ապահովութեան համար : Հարեւան Սերաստրոն առեւտրական ցամաքային ուղիների խաչաւորման գըլխաւոր կեդրոններից էր : Այստեղ առեւտրականներ էին գալիս Արիմից , Անդրկովկասից , Իրանից , Միջագետքից , Չինաստանից , Հընդկաստանից , ինչպէս նաեւ Կիլիկիայից , Արարիկայից ու Եգիպտոսից : »

«Մոնղոլները կողմից Բաղդադի զրաւումով (1258) փոխուեց Առաջաւոր Ասիայի քարաւանային մայրուղիների ուղղութիւնը : Մեծ նշանակութիւն ձեռք բերեց Առաջաւոր ասիական նոր տարանցիկ ուղին՝ Այսոս-Թուրիզ : Ուստի խիստ բարձրացաւ Կիլիկիայի տարանցիկ ուղիների եւ Կիլիկեան հայկական պետութեան դերը՝ ԺԳ-ԺԴ . դարերի միջադարձային առեւտրում»¹⁴ :

Անկախաբար տարանցիկ առեւտուրէն , Կիլիկիոյ հայ վաճառականներու ձեռքին մէջ կեդրոնացած էր սելճուքեան շուկաներու շահագործումը , որ պիտի զարգանար նաեւ մոնղոլական ընդարձակ շուկաներու շահագործումով , երբ մոնղոլները սկսան տարածուիլ 1243 թ . էն յետոյ՝ սելճուքներու պարտութեամբ :

Վաճառականութեան զարգացումին համար անհրաժեշտ էր ստեղծել զբամական շրջանառութեան առողջ եւ վստահելի դրութիւն մը : Արդ՝ Փոքր Ասիոյ մէջ գտնուող պետութիւնները հազուադէպ առիթներով արծաթ հատանած են , բաւականանալով առաւելապէս պղինձ զբամներով , իսկ հատանուած արծաթները իրենց գտութեամբ եւ կշիռով ստորադաս եղած են Հայկական Կիլիկիոյ զբամներուն : ԺԳ . դարուն կար նաեւ արծաթի սուր տաղանալ մը Մերձաւոր Արեւելքի եւ Փոքր Ասիոյ բոլոր երկիրներուն մէջ , բացի Հայկական Կիլիկիայէն :

Կիլիկիոյ զբացի Ռումի սելճուքները , որոնք տիրած էին նախապէս բիւզանդական քաղաքակրթութեամբ դաստիարակուած զանդուածներու , միայն երկու առիթներով արծաթներ հատանած են պատկերաւոր դրոշմներով : Մին՝ Սուլէյման Բ . ի օրով (1199-1203 թթ .) իսկ միւսը՝ Գայ Խոսրով Բ . Քայքոպատի (1236-1245 թթ .) ,

սրոնց միջին կշիռն է մօտ 2.60 կրամ¹⁵, մինչդեռ, կիլիկեան դրամները կը կշռեն 2.95—2.96 կրամ, արծաթի 90—92% միջին զտութեամբ¹⁶:

Նոյնն էր կացութիւնը Էրզրումի սելճուք պետութեան համար, որուն դրամներուն ճնշող մեծամասնութիւնը պղինձ էր, սահմանափակ ու տեղական դրածածութեան համար:

Օրթուկեան պետութիւնները, որոնք զբաւած էին մեծ մասը Վասպուրականի, եւ Մարտինի, Ամիդի ու Խարբերդի շուրջը թագաւորութիւններ հաստատած, զուրկ էին արծաթ դրամներէ, եւ իրենց դրամական հիմնական շարքը պղինձն էր: Կարգ մը մելիքներ, պղինձ դրամներուն վրայ ՏԻՐ ՀԵՄ գրելով պարտադրած էին զանոնք սրպէս արծաթ:

Տաղնապի մէջ էր նաեւ Բիւզանդիոնը, որովհետեւ Չորրորդ Խաչակրութիւնը փոխանակ Երուսաղէմ ուղղուելու, բաւականացած էր 1204 թ.ին Պոլսոյ գրաւումով:

Խաչակիրները Պոլիս մնացին մինչեւ 1261 թ., կողոպտելով քաղաքին հարստութիւնները, առանց խնայելու սրբափայրերը, վանքերն ու եկեղեցիները: Պոլսոյ գրաւումը ծրագրուած եւ քաջալերուած էր վենետիկցիներու կողմէ՝ առեւտրական նկատումներով, շահագործելու համար փոքր ասիական շուկաները: Վենետիկցիները տեղաւորուեցան մանականդ նաւահանգիստներուն մէջ, ու առեւտրական համալիրներ եւ դրասենեակներ ստեղծեցին (comptoirs): Խաչակիրներու կողմէ Պոլսոյ գրաւման տեւողութիւնը (1204—1261 թթ.) մօտաւորապէս կը համընկնի Հեթումի գահակալութեան տարիներու (1226—1270 թթ.) տեւողութեան:

Յատկանշական է որ խաչակիրները՝ Պոլսոյ գրաւման շուրջ յիսունը վեց տարիներու ընթացքին, դրամ հատանած չեն: Շուրջ պերժէ իր՝ Լատին Արեւելքի իշխանութիւններուն դրամներու ընդարձակ ուսումնասիրութեան մէջ¹⁷ կը մերժէ որեւէ դրամ յատկացնել խաչակիրներուն, հակառակ ոմանց ենթադրութեան որ կարգ մը անանուն եւ աննշան պղինձ կտորներ կրնան իրենց վերագրուիլ: Աւելցնենք որ բիւզանդական դրամական դրութիւնը սկիզբէն ի վեր

15. Stanley Lane Poole, **The Coins of the Turkman Houses** British Museum, London, 1877.

16. P. Z. Bedoukian, **Coinage of.....**, p. 110.

17. G. Schlumberger, **Numismatique de L'Orient Latin**, Graz, Aurtria, 1954, pp. 274-275

չատ հագուադէսլ առիթներով արծաթ հատանած էր: Այս դրաման չըջանին, չըջանառութեան մէջ զրուեցան Վենետիկի կողմէ ոսկի եւ արծաթ դրամներ, որոնք հատանուեցան ծովեզերեայ կարգ մը նաւահանգիստներու մէջ: Որոշ է սակայն որ վենետիկեան արծաթները լայն թափանցում չէին գտած Փոքր Ասիոյ ներքին շուկաներուն մէջ, ուր շատ հաւանարար, տիրող դրամը Հեթումի արծաթ դրամն էր, տրուած ըլլալով անոր բարձրորակ մետաղի գուութիւնը եւ կշռային առաւելութիւնը: Հեթումի դրամը իր գրոշմով կըցած էր ինքզինք պարտադրել եւ փնտռուիլ Կիլիկիայէն դուրս՝ ընդարձակ շուկաներու մէջ: Դրոշմի որեւէ փոփոխութիւն կընար վերապահութիւններ ստեղծել եւ վտանգել Հեթումի դրամին ստեղծած վարկը: Հեթում հասկընալի հեռատեսութեամբ զրոշմը պահեց անփոփոխ, նոյնիսկ Զապէլ թագուհիի մահէն (1252 թ.) ետք:

Իսկ Հեթում-Զապէլ դրամներու զոյգ պատկերներով զրոշմը առնչութիւն չունէր զանդուածներու մօտ Զապէլի դահակալական իրաւունքները նուիրադործելու կամ յայտարարելու հարցին: Հայկական Կիլիկիոյ ժողովուրդը անտարբերութեամբ հետեւեցաւ դահակալական կարգադրութիւններուն, երբ Զապէլ նախ խոստացուեցաւ Հունգարիոյ թագաւորի կրտսեր զաւկին¹⁸, ապա՝ ամուսնացաւ օտարական Ֆիլիբ իշխանին, որ սպաննուեցաւ, եւ ի վերջոյ՝ պսակուեցաւ Հեթումի հետ: Դրոշմը նորարարութիւն մըն էր միայն Հեթումի փողերանոցի պատասխանատուներուն կողմէ, հաւանարար իր թագադրութեան եւ ամուսնութեան առիթներով:

ԵՐԿԼԵՁՈՒԵԱՆ ԴՐԱՄՆԵՐ: Բացառիկ դրամներ են Հեթումի երկկեզուեան արծաթները: Առաջակողմին վրայ Հեթում կը ներկայանայ ձի հեծած դէպի աջ. դաշտին մէջ, ձիու քամակէն վեր՝ ընդհանրապէս կայ խաչ մը: Մակազրութիւնն է Հեթումի ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՅ: Դրամին յետսակողմը, արաբերէն գրութեամբ, յիշուած է Ալա էտ Տին Քայքոպատ Պըն Քայխոսրոյի անունը եւ երկրորդ խումբ մը՝ հատանուած է Ղըյաս էտ Տունիա ու Ատտին Քայխոսրոյ պըն Քայքոպատ, սելճուք սուլթաններուն անուններով: Ալա էտ Տին տիրած է 1228-1236 թթ., Իսկ Ղըյաս էտ Տին՝ 1237-1245 թթ.: Որոշ չէ թէ Ալա էտ Տինի երկկեզուեան դրամները երբ հատանուած են: Բայց Ղըյաս էտ Տինի պարագային որոշապէս յիշուած է թէ հատանուած

ևն Սիսի մէջ Հիճրի 637-643 (1239-1245) թուականներուն¹⁹: Ղըյաս էտ Տիւնի դրամներուն արարելէն արձանագրութիւնն է.

السلطان العظيم غياث الدنيا والدين كيخسرون كيقباد ضرب بسيس سنة سبع وثلاثين وستاية
(Տես՝ նկար թիւ 2)



Նկար թիւ 2

Երկլեզուեան դրամները պատմարաններու եւ դրամագէտներու կողմէ արժանացած են տարբեր մեկնաբանութիւններու: Հայր Սիւպիլեան կ'ենթադրէ որ «... Հեթումին Ալաէտտինին հետ սիրոյ եւ բարեկամութեան դաշինք դնելուն արդէն ժամանակակից պատմագրէ ալ վկայութիւն ունինք: Կիրակոս Գանձակեցի այսպէս կը զրէ — Իսկ մեծ իշխանն Կոստանդին. իբրեւ առ զիշխանութիւնն թագաւորութեան որդւոյ իւրոյ Հեթմոյ զամենայն հոգս արքայութեան յանձն առեալ. իմաստաբար կարգաւորէր... Արար սէր եւ միաբանութիւն ընդ սուլտանին Հոռոմոց որում անունն էր Ալադին—»: Սիւպիլեան կը շարունակէ, «...Ալաէտտինի եւ Հեթումի սս երկլեզուեան ստակը կ'երեւայ որ այսպիսի բարեկամական յարաբերութեանց ժամանակները կոխուած ըլլայ: Իսկ Ղայասէտտինի ու Հեթմոյ մէջ ժամանակակից մատենագիրք ԱՄԵՆԵԻԻՆ ԴԱՇԻՆՔ ՄԸ ԿԱՄ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ Մ'ԸԼԼԱԼԸ ՁԵՆ ՅԻՇԵՐ (ընդգծումը մեր կողմէ, Պ. Ս.), բայց անոնցմէ դտնուած այնչափ երկլեզուեանները՝ բաւական են ցուցնելու որ նոյնպիսի դաշինք ու բարեկամութիւն մէջներնին պիտ' որ ըլլար, ինչու որ Ղայասէտտին՝ Ալաէտտինին անմիջական յաջորդն էր ու մի եւ նոյն

19. P. Z. Bedoukian, *Coinage of.....*, pp. 227-234.

վտանգները, մասնաւանդ թէ աւելի մեծ վտանգներ երկու կողմն ալ կը ստիպէր, եւս աւելի իրենց մէջ միանալու»²⁰ :

«... Սակայն եւրոպացի մատենագիրներէն ոմանք աս երկլեզուեան դահեկաններէն կ'ուզեն հետեւցնել թէ Գոնիայի սուլթաններուն հարկատու ու հպատակ ըլլալնուն համար կոխուած ըլլան : Այսպէս կը գրէ Ատլէր, Սեսլինի, Տիւ Գանթ, Լը Վայեան տը Ֆլորիւլալ . նոյնպէս կը հաստատէ Պր. Լանկլուա»²¹ : Եզրակացնելով, Հայր Սիպիլեան իր սեփական կարծիքը կը խտացնէ հետեւեալ տողերով . «... աւելի հաստատուն կարծիք է ըսել՝ որ աս երկլեզուեան ստակները բարեկամական կապակցութեան ու յարաբերութեան եւ միանգամայն ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ ԵՐԿՈՒ ՍԱՀՄԱՆԱԿՅՑ ՏԷՐՈՒԹԵԱՆՅ ՄԷՋՆ ԱԼ ԱՆՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒԱԾ ՍՏԱԿՆԵՐ ԷՆ (ընդգծումը մեր կողմէ, Պ. Ս.)»²² :

Վերոյիշեալ մէջբերումները յստակօրէն ցոյց կու տան Հայր Սիպիլեանի ճիշդ բացատրելու համար երկլեզուեան դրամներու հատանման պատճառները : Հիմնուելով Կիրակոս Գանձակեցիի մէկ վկայութեան վրայ, թէ՛ Կոստանդին Պայլ «արար սէր եւ միարանութիւն ընդ Սուլտանին Հոռոմոց», դժուար է ենթադրել որ դաշինք ու բարեկամութիւն յայտարարուին դրամի վրայ պատկերացուած դրոշմներով : Դաշինքներ ու բարեկամական պայմանագրեր անշուշտ կը պահուէին թաղաւորական դիւաններու մէջ :

Հայր Սիպիլեան իրաւունք ունի նաեւ ժխտելու օտար դրամադէտներու կարծիքները, որոնք երկլեզուեան դրամներու վրայ հիմնուելով կ'ուզեն հետեւցնել թէ Կիլիկիան Գոնիայի սուլթաններուն հարկատու եւ հպատակ եղած է²³ :

Ս. Բոռնագեան, հիմնուելով Գանձակեցիի վկայութեան եւ Կոստանդին Պայլի ու Ալաէտտինի միջեւ տեղի ունեցած միաբանութեան վրայ կը գրէ թէ՛ «դա չփոխեց Կիլիկիայի քաղաքական կախումը Իկոնիայի սուլթանից :

«Հետեւ Ս. , որը ճանաչել էր Իկոնիայի սուլթանի գերիշխանութիւնը եւ դրամ էր հատանել, մի երեսին իր, իսկ միւս երեսին սել-

20. Ն. Կ. Սիպիլեան, Դասաւորութիւն... , Յաւելուած, էջ 19-20 : Նաեւ տես՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց (աշխ. Կ. Ա. Միլիֆ-Օհանջանեանի), Երեւան, 1961, էջ 190 :

21. Հ. Կ. Սիպիլեան, Դասաւորութիւն... , Յաւելուած, էջ 20 :

22. Նոյնը, էջ 21 :

23. Նոյնը, էջ 22 :

ճուղ սուլթան Քէյքուպաթի պատկերներով (Sic)»²⁴ :

Ճշդենք որ ինչպէս մեր թիւ 2 նկարը որոշ կերպով ցոյց կու տայ, երկլեզուեան դրամներուն վրայ միայն Հեթումի պատկերն է որ դրոշմուած է : Իսկ արարերէն կողմը զուրկ է պատկերէ :

Նոյն աշխատութեան մէջ այլ տեղ յիշուած է թէ՛ «Այդ ժամանակներում թողարկուեցին նաեւ երկլեզուեան հայերէն եւ արարերէն արձանագրուած թիւներով արծաթէ դրամներ : Դրանք շրջանառութեան մէջ մտան 1236–1245 թթ.՝ Հեթում Ա. ի եւ Իկոնիայի սելճուքեան սուլթաններ Քէյ Քուպաթի ու Քէյ Սոսրովի անուններով, որի առթիւ նախապէս յատուկ համաձայնութիւն էր կայացել»²⁵ :

Թէ որքան «յատուկ համաձայնութիւն է կայացել»՝ կը կարօտի լուսարանութեան, որովհետեւ Գանձակեցիի վկայութենէն դուրս, ուր խօսք կ'ըլլայ բարեկամական յարաբերութիւններու ամբապընդման մասին, աղբիւրներ գոյութիւն չունին թէ Կիլիկիան կախուածութեան մէջ գտնուած է Իկոնիոյ սուլթաններէն :

Դոկու. Պտուկեան կը խորհի թէ այս դրամները հատանուած են որպէս գրաւական Հեթումի կողմէ սելճուք թագաւորներու աւատակետական դերիշխանութեան (suzerainty) անուանական ճանաչման²⁶ :

Մենք կը խորհինք թէ համողիչ փաստեր չկան որ Հեթում կախում ունեցած է սելճուքներէն, կամ հարկատու եղած անոնց : Մեզի կը թուի թէ երկլեզուեան դրամները ունեցած են առաւելաբար վաճառականական դրողապատճառներ, ինչպէս նախատեսած է Հայր Սիւպիլեան :

Հիմնաւորելու համար մեր վարկածը, անհրաժեշտօրէն նկատի պիտի առնենք դրացի երկիրներու կիրարկած դրամական դրութիւնները :

Ռումի սելճուքները, հակառակ իսլամ կրօնքի պատկերամերժ խտրութեան, երկու առիթներով պատկերաւոր արծաթներ հատանած են, մին՝ Ռուքն էտ Տին Սուլէման Բ. ի (1199–1203 թթ.) կողմէ (տես՝ նկար թիւ 3), եւ միւսը՝ Ղըյաս էտ Տին Քայխոսրոյի (1237–1245 թթ.) կողմէ, իր ծանօթ Արեւ եւ Առիւծ դրոշմով :

Աւելի հեռու դացին Օրթուքեան մեղիքները իրենց պատկերաւոր դրամներով, որոնց դրոշմները ընդօրինակած էին սելեւկեան, սասանեան, հոմէական ու բիւզանդական դրոշմներէ, եւ նոյնիսկ

24. Տես՝ Հայ Ժողովրդի Պատմութիւն, Գ. հտր., ՀՍՍՀ ԳԱ. Հրատ., էջ 700 :

25. Նոյնը, էջ 733–734 :

26. P. Z. Bedoukian, *Coinage of.....*, pp. 51, 84,

քրիստոնէական կերպարներէ, ու երբեմն անբացատրելի յղացումով խմբային խճողուած պատկերներէ :

Օրթուքեան մելիքներու համար կը թուի թէ կրօնական նկատումներէ աւելի կարեւոր էին առեւտուրի եւ դրամական շրջանառութեան ծաւալումը եւ տնտեսական եկամուտները : Իրենց տիրապետութեան տակ դոնուող զանգուածները մեծամասնութեամբ հայ կամ յոյն բնիկ տարրեր էին : Անհրաժեշտ էր զանոնք սիրաշահիլ եւ զարդացնել վաճառականութիւնը²⁷ :

Նոյն դրութիւնը կիրարկուեցաւ նաեւ էյուպեան տոհմէն Ալ Աուհատ եւ Ալ Աշրաֆ մելիքներուն կողմէ, հակառակ էյուպեաններու մոլեռանդ կրօնամոլութեան : Անոնք իրենց դրամներուն վրայ կը կրեն նաեւ Շահ Արմէն տիտղոսը (տես՝ նկար թիւ 4) :



Նկար թիւ 3



Նկար թիւ 4

Սակայն դրամի շահագործման ամենացայտուն օրինակը, որպէս վաճառականութեան թափանցումի միջոց, կը գտնենք խաչակիր իշխաններու մօտ, որոնք ժ.Բ. դարու սկիզբէն սկսեալ, ոսկիներ հատանցին յար եւ նման իսլամական Ճաթիմի տինարներուն, յիշելով մարգարէին անունը, հիճրի տարեթիւերը եւ իսլամական հաւատոյ հանգանակը : Հարիւր եւ աւելի տարիներ անոնք շարունակեցին այս դրամներուն հատանումը՝ մանաւանդ թրիփոլիի եւ Աքքայի փողերանոցներուն մէջ : Սկզբնական շրջանին խաչակիրները հաւանաբար ունեցան քուֆի գրելակերպին վարժ փորագրիչներ, որոնք Ճաթիմի

27. Ghaleb Edhem, *Catalogue des Monnaies Turcomanes*, Istanbul, 1894; Arnold Forni, *Musée Imp. Ottoman*, Bologne, p. xvi; Stanley Lane Poole, *The Coins of Turkuman Houses.....*, p. ix.

ուսկինները ընդօրինակեցին հարադատօրէն: Վերջին շրջանին սակայն, անվարժ ձևերը բաւականացան քուֆի գիրերու տեղ գծիկներ դրոշմելով, որոնք թէև անընթեռնլի եւ անիմաստ՝ սակայն եւ այնպէս, իրենց արտաքին երեսոյթով խարուսիկ՝ հարադատ տինարի տպաւորութիւն կը ձգէին անզրպգէտ եւ անուս զանգուածներուն վրայ:

Սաչակիրները այս տինարները հատանեցին վաճառականական նպատակներով, թափանցելու՝ հարեւան արար շուկաներէն ներս:

Հոռո՛ի սպալը յաճախ ընդդիմացաւ իսլամական դրոշմով եւ յղացումով այս դրամներու հատանումին, եւ սպառնաց պատասխանատունները բանադրել: Տարիներ շարունակ, այս սպառնալիքները մնացին ապարդիւն, մինչեւ որ Փրանսայի թագաւոր Լուի Թ. նոր խաչակրութեամբ հասաւ Սուրիա եւ այցելեց Թրիփոլի ու Աքքա: Իրեն կ'ընկերանար պապական նուիրակ Լեկաթ Շաթորու, որ մանրամասն տեղեկադրով դայթակողութիւնը յանձնեց Իննոկլինդոս Դ. պապին ուղարկութեան: Բանադրանքի թուղթեր զրկուեցան Թրիփոլիի եւ Աքքայի իշխաններուն, որոնք 1250 թ.ին դադրեցուցին արարատառ ոսկիներու հատանումը²⁸:



Նկար քիւ 5

Բացառուած չէ որ Հեթում՝ 1245 թ.ի շուրջ, նմանօրինակ թելարանք ստացած ըլլար պապէն, ընդհատելու համար արարատառ եւ հիւճրի թուականութեամբ իր դրամները, որոնք շրջանառութեան դրուած էին շրջանէ մը ի վեր վաճառականական գործառնութեանց ծաւալման նկատումներով: Հեթում՝ իր երկլիզուեան դրամներուն համար զիտակցօրէն ընտրած էր Սուլէյման Բ. (1199–1208 թթ.) արծաթ դրամը (տես՝ նկար թիւ 5), որ լայն տարածում գտած էր սել-

28. G. Schlumberger *Numismatique...*, pp. 123, 139, 141.

ճուղներու մօտ: Անգրագէտ սելճուքները ի վիճակի չէին զանազանելու Հեթում եւ Սուլէյման թագաւորներուն անունները: Յետսակոզմի արարատառ գրութիւնը կը դիւրացնէր այդ դրամներուն շրջանառութիւնը:

Հետեւաբար՝ երկլեզուեան դրամները հատանուած չէին հարկատուութեան կամ ենթակայութեան պատճառներով, հապա՝ տնտեսական ու առեւտրական մտահոգութիւններով: Երկլեզուեան դրամները, ինչպէս Հեթում-Չապէլ արծաթները, բացառիկ միջոցառումներ էին, որոնք կը ձգտէին զարգացնել Կիլիկիոյ վաճառականութեան ծաւալումը, եւ անոր թափանցումը դրացի շուկաներէն ներս:

ON THE QUESTION OF HETHUM - ZABEL AND BILINGUAL COINS OF HETHUM I OF CILICIA

BERJ SABBAGHIAN

(Summary)

During the long period of his reign, King Hethum I (1226-1270) of Cilician Armenia, continuously has mint only two types of silver coins: namely the Hethum-Zabel coins and the one known as the bilingual coins. In the Armenian historiography the tendency has been to explain the reason behind these coins as follows: Hethum-Zabel coins were mint to prove the legitimate right of Zabel for the throne, while the bilingual coins were mint as a token evidence of the Seljuk suzerainty over Cilicia.

In this article, after a thorough study, the author concludes that the two types of coins were mint because of economic and commercial reasons. These coins helped Cilician Armenia to penetrate and open new markets in the neighbouring countries.